

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Երևանի պետական համալսարանի Ֆիզիկայի ֆակուլտետի
գիտական խորհրդի 12.12.19թ. կայացած թիվ 6.19-20 նիստի

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 36 անդամներից 29-ը:

Հաստատվեց հետևյալ օրակարգը՝

1. Ֆիզիկայի ֆակուլտետի դեկանի տարեկան հաշվետվությունը:

Նիստը վարեց պրոֆեսոր Ա. Կիրակոսյանը:

Լսեցին՝ Ֆիզիկայի ֆակուլտետի դեկանի տարեկան հաշվետվությունը:

Պրոֆ. Կիրակոսյանը հաշվետվություն ներկայացնելու համար խոսքը փոխանցեց
ֆակուլտետի դեկան պրոֆ. Ռ. Հակոբյանին:

Ռ. Հակոբյանը իր **ելույթում** ասաց, աշխատանքները հիմնականում ընթացել են
հետևյալ ուղղություններով.

Նոր մասնագիտությունների բացում:

Մշակվել են ուսումնական ծրագրեր հետևյալ մասնագիտություններով.

- Տվյալների մշակումը ֆիզիկայում և արհեստական բանականություն:
- Երկակի նշանակակության տեխնոլոգիաների ֆիզիկա:
- Նանոֆիզիկա և առաջատար տեխնոլոգիաներ:

Բնչաբանական մեկ մագիստրոսական ծրագիր

- Պինդ մարմնային նանոֆիզիկա և նանոնյութեր

Բոլոր մասնագիտությունները հաստատվել են ԵՊՀ գիտխորհրդում: Այժմ գտնվում են
նախարարության կողմից հաստատման փուլում: Այժմ գործընթացը կասեցված է,
սպասում ենք հետագա զարգացմանը:

Համագործակցություն

Համագործակցության վերաբերյալ կնքվել են հետևյալ պայմանագրերը

- Բելգիայի ազատ համալսարանի հետ համատեղ մագիստրատուրա
և լաբորատորիա ստեղծելու մասին:

- Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միության հետ:
- ՀՀ ԳԱԱ Վ. Համբարձումյանի անվան Բյուրականի աստղադիտարանի հետ:
- Ա.Բ. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիայի հետ:
- ՀՀ ԳԱԱ ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտի հետ:
- 29 Sep. - 06 Oct. 2019 German (Hamburg)-Armenian Student Course on Accelerator Physics

Նախապատրաստվում են պարմանագրեր հետևյալ կազմակերպությունների հետ.

- Բուրգունդիայի համալսարան, Դիժոն, Ֆրանսիա
- Կազանի ֆեդերալ համալսարան
- International Centre For Relativistic Astrophysics Network
- Joint Institute for Nuclear Research, the Frank Laboratory of Neutron Physics
- Ջայլինքս (Xilinx) Armenia
- Synopsys, National Instruments
- OneMarketData , Instigate design

Մեմինարներ

Տարվա ընթացքում ֆակուլտետում անցկացվել են մի շարք սեմինարներ ամենատարբեր թեմաներով: Մեմինարներով են հանդես եկել Յուրի Հովհաննիսյանը, Արտյոմ Օգանովը, Անի Ապրահամյանը, Լևոն Եպիսկոպոսյանը, Heidi Ottevaere (VUB), Տիգրան Գալստյանը (Լավալ), O.V.Velychko and I.V.Stasyuk (Ukraine), Կարեն Վարդանյանը, Ռուբեն Զադոյանը (USA), Բորիս Գանսիկեն (Ուորվիքի, Անգլիա), Varvara Sosedova (Russia), Շվեցով (Դուբնա), Ավետիք Զալաբյանը :

Լուսաբանում

Մեմինարները տեսագրվել են և տեղադրվել են ֆիզիկալի ֆակուլտետի YouTube-յան ալիքում, ինչպես նաև ֆեյսբուքյան էջում:

Կազմվել է ֆիզիկայի ֆակուլտետի գործունեությունը ներկայացնող բուկլետ:

Ստեղծվել է ֆիզիկայի ֆակուլտետի կայքը:

Կատարվել են մի շարք այցելություններ ՀՀ տարբեր դպրոցներ:

Տարվա ընթացքում ընդունվել են դպրոցականների բազմաթիվ խմբեր:

Անցկացվել է դպրոցականների օլիմպիադա:

Մեկնարկել է "Սովորող ուսուցիչ" ծրագիրը, որը ենթադրում է համագործակցություն դպրոցների ուսուցիչների հետ:

Այս տարի ֆիզիկայի ֆակուլտետ են ընդունվել 73 ուսանող, որոնցից 58-ը "Ֆիզիկա" մասնագիտությամբ, 15-ը՝ "Միջուկային ռեակտորների ֆիզիկա" մասնագիտությամբ: Իրականացվել են ուսանողների արցելություններ ատոմակայան, մոլեկուլային կենսաբանության ինստիտուտ, CANDLE, LT-Pirkal, Աշտարակի ինստիտուտներ, ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ինստիտուտ:

Ուսանողները ստացել են՝

“Վարդանանց ասպետներ” միության (ԱՄՆ) միանվագ, կրթաթոշակ,

SS բնագավառում ՀՀ նախագահի մրցանակ,

Լավագույն մագիստրոսական թեզ – 2 մրցանակ:

Տարվա ընթացքում հրատարակվել են 4 դասագիրք և 6 ուսումնական ձեռնարկ: Ֆակուլտետում պաշտպանվել 2 են դոկտորական և 5 թեկնածուական ատենախոսություններ: Միայն 2019թ.-ի ընթացքում տպագրել է 111 հոդված և 95 թեզիս: Ֆակուլտետում իրականացվում են 4 միջազգային և 13 տեղական դրամաշնորհային ծրագրեր:

Դեկանի ելույթից հետո հարցեր և ելույթների համար Կիրակոսյանը խոսքը փոխանցեց ներկաներին:

Ելույթ ունեցավ Ռ. Ավագյանը: Նա ասաց որ ունի առաջարկ: Ուղարկվել մշակվող ուսումնական ծրագրերը ամբիոններին, որպեսզի աշխատակիցներն էլ ծանոթանան նախատեսվող դասընթացներին:

Ելույթ ունեցավ Ա. Բալաբեկյանը: Նա նշեց, որ իրենց ամբիոնի առանձնահատկությունից ելնելով՝ ավելի նպատակահարմար է, որ դասերի մի մասը անցկացվի ոչ թե համալսարանում, այլ ինստիտուտներում, որոնք ունեն ավելի հարուստ փորձարարական բազա: Արդյոք հնարավո՞ր է դա իրականացնել:

Նաև ասաց, որ մագիստրատուրայի ուսանողները հետազոտական աշխատանք են կատարում և շատերը նույնիսկ ձևակերպված են որպես աշխատակից

գիտահետազոտական ինստիտուտներում: Ավելի նպատակահարմար կլիներ նրանց դասերը անցկացնել երեկոյան ժամերին:

Ինչպես նաև հարցրեց, արդյոք հնարավոր է ուսանողին յուրաքանչյուր առարկայի համար տրվող 20 միավորը դասախոսը տարբեր հանձնարությունների համար բաշխի իր հայեցողությամբ՝ ընդունված ձևի փոխարեն:

Ելույթ ունեցավ Ա. Վարդանյանը: Նա նշեց, որ նախարարությունը կասեցրել է ֆիզիկայի ֆակուլտետների առաջարկած նոր մասնագիտությունների լիցենզավորումը: Բայց քանի որ խնդիրը շատ հրատապ է, խնդրեց ԵՊՀ ղեկավարությանը՝ օժանդակել հարցի արագ լուծմանը:

Ելույթ ունեցավ Ա. Միքայելյանը: Նախ նա ասաց, որ ողջունելի է Բյուրականի աստղադիտարանի և ֆիզիկայի ֆակուլտետի միջև եղած համագործակցության սերտացումը: Բացի դա նա առաջարկեց զարգացնել միջդիսցիպլինար ուղղությունները ֆիզիկայի ֆակուլտետում, քանի որ ներկայումս դրանք շատ արդիական են:

Ելույթներն ավարտվելուց հետո Ա. Կիրակոսյանը առաջարկեց քվեարկել՝ հաշվետվությունը ընդունելու համար:

ԵՊՀ ֆիզիկայի գիտխորհուրդը միաձայն ընդունեց Ռ. Հակոբյանի տարեկան հաշվետվությունը:

Ելույթ ունեցավ ԵՊՀ Ռեկտոր Գ. Գևորգյանը: Գ. Գևորգյանը ասաց, որ Հաշվետվությունը վերաբերվում էր 2018-2019 ուսումնական տարում ֆակուլտետում իրականացված աշխատանքներին, և ինքն ակնկալում էր ավելի կոնկրետ լսել կատարված աշխատանքների մասին:

Գ/հ ինստիտուտներում դասերը կազմակերպելու վերաբերյալ նա նշեց, որ առարկություններ չունի, անհրաժեշտ է միայն նախապես դիմել ռեկտորատ: Մագիստրատուրայի դասերը երեկոյան անցկացնելուն ևս դեմ չի՝ եթե նախապես համաձայնության գան դեկանատի և ուսանողների հետ: Ուսանողի գնահատականը՝ 20 բալլը, ըստ առաջադրանքների բաշխելու հարցում դասախոսը ունի բավականին մեծ ազատություն:

Ֆակուլտետի հետագա զարգացման և աշխատանքի հետ կապված՝ Գևորգյանը նշեց, որ տարիներ շարունակ ֆակուլտետի դասախոսները աշխատում են թերբեռնված, ինչը

բացասաբար է անդրադառնում ուսումնական պրոցեսի վրա: Հարցը լուծելու համար նա առաջարկեց ամբիոնները միավորել, իսկ հետագայում միգրացիոն նպատակահարմար կլինի մի քանի ֆակուլտետներ միավորել և ստեղծել դպրոցներ:

Ֆիզիկայի ֆակուլտետի դեկան՝



Ռ.Ս. Հակոբյան

Խորհրդի քարտուղար՝



Շ.Ա. Տոնոյան